

Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

14

ԳԼՈՒԽ ՃԺԱ ՎԱՍՆ ՀԱՐԱՆՑ ԱՆԴՐԱՆԿԱՑՈՒՑԱՆԵԼՈՅ ՋՈՐԴԻՍ

Եթէ լինիցին առն կանայք, մինն ի նոցանէ՝ սիրելի, եւ մինն՝ ատելի, եւ ծնանիցին նմա որդիս սիրելին եւ ատելին, եւ լինիցի որդի անդրանիկ ատելոյն: Եւ եղիցի յաւուր, յորում ժառանգեցուցանէ որդոց իւրոց զինչս իւր, մի՛ իշխեսցէ անդրանկացուցանել զորդի սիրելոյն, անտես արարեալ զորդի ատելոյն զանդրանիկ, այլ զանդրանիկ ատելոյն ծանիցէ՝ տալ նմա կրկին յամենայնէ, ոչ ինչ գտանիցի նմա, զի նա է, սկիզբն որդոց նորա, եւ նմա է անդրանկութիւնն: Արդ, զայս դատաստանս ի մեզ այսպէս առցուք: Զի թէ ոչ է քրիստոնէից ունել միանգամայն երկուս կանայս, սակայն ի մի կնոջէ լինիցի որդիս, եւ թէ երկրորդ առցէ կին, եւ յանմանէ իցէ որդի, մի՛ վասն սիրոյ կրսերոյն զնա անդրանկացուսցէ եւ կամ աչառեալ ի վերջի կնոջէն՝ զորդի նորա: Այլ զսկիզբն որդոց իւրոց պատուեսցէ, ըստ որում եւ Տէր պատուիրեաց՝ տալ զառաջին ծնունդն եւ առաւել տալ ի ժառանգութեանցն, բայց եթէ պատահի յաղագս անպիտանութեան չառնել արժանի:

ԳԼՈՒԽ ՃԺԲ ՎԱՍՆ ԱՆԶԳԱՄ ՈՐԴՈՅ

Եթէ իցէ ուրուք որդի խեռ եւ անզգամ եւ ոչ լուիցէ ձայնի հօր եւ մօր իւրոյ, եւ խրատեսցեն զնա, եւ ոչ անսայցէ, կալցին զնա հայր եւ մայր իւր եւ տարցին առ

Յատուկ Պոէմ

ծերակոյտս քաղաքին իւրեանց եւ ի դուռն տեղոյն իւրեանց եւ ասասցեն ցարս քաղաքին իւրեանց. որդիս մեր այս անզգամ է եւ ոչ լսէ ձայնի մերում, հարկանող է եւ արբշիռ: Եւ քարկոծեսցեն զնա արք քաղաքին իւրեանց, եւ մեռցի, եւ բարձջիք զչարն ի միջոյ ձերմէ, եւ լուեալ այլոցն զահի հարկանիցին: Ջոյգ է այս դատաստան այնմ, որ զծնողսն անարգէ, զի անդ՝ մահու մեռցի, զի զիւրն անարգէ զծնողսն եւ նովաւ՝ զհասարակացն Աստուած, եւ աստ՝ առանց միջնորդի՝ միայն զԱստուած, լուծմամբ պատուիրանին: Վասն որոյ անդ՝ մահու մեռցի, որ է երկու մահ, եւ աստ՝ պարզաբար մեռցի, որ է միայն առ Աստուած յանցանքն: Այլ որպէս անդ եդաւ իրաւամբք՝ ելանել ի ժառանգութենէ փոխանակ մահուն, նոյն լիցի եւ աստ:

ԳԼՈՒԽ ՃԺԳ ՎԱՍՆ ՄԱՀԱՊԱՐՏ ՄԵՌԵԼՈՑ

Եթէ հասանիցեն ումեք մահապարտութիւն, եւ մեռանիցի, կանխեսջիք զնա զփայտէ, եւ մի՛ ադանիցի մարմին նորա ի փայտին, այլ թաղեսջիք զնա ի նմին աւուր, զի անիծեալ է յԱստուծոյ ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ: Ջի թէպէտ ամենայն օրինադրութիւնս ոչ միայն առ ճառսն, այլ եւ առ միտսն բազում ունի պատճառս, այլ մեզ որքան հարկաւորն է իրաւանց դատաստանի՝ առնլի է: Եւ զի անդ զԻսրայէլացոցն ասացաւ թաղել զմարմին, եւ զի ի մերոց թագաւորաց ոչ հրամայեցաւ սպանանել, բայց միայն խրատել: Իսկ թէ այլազգի պատահի ի մահապարտութիւն, ոչ է արտաքոյ իրաւանց, զբնութիւնս պատուելոյ աղագաւ, թաղել տալ հրաման՝ յորժամ մեռանի, ուր եւ իցէ:

ԳԼՈՒԽ ՃԺԴ ՎԱՍՆ ԿՈՐՍՏԻՑ

Գուցէ տեսեալ զարջառ եւ զոչխար եղբօր քոյ մոլորեալ ի ճանապարհի, մի՛ անտես առնիցես զնոսա, այլ դարձուսցես զնոսա եւ ածցես առ եղբայրն քո: Ապա թէ չիցէ եղբայրն քո մօտ առ քեզ, եւ ոչ ճանաչիցես զնա, ժողովեսցես զնոսա ի տան քում, եւ եղիցին առ քեզ, մինչեւ խնդրեսցէ զնոսա եղբայրն քո, եւ տացես ցնա: Նոյնպէս արասցես զէշ նորա, եւ զհանդերձ, եւ զամենայն կորուստ եղբօր քոյ, որ ինչ կորնչիցի: Մի՛ իշխեսցէ եղբայր ոք անտես առնել զինչս եղբօր իւրոյ: Գութ եւ խնամս ունելով ուսուցանէ Օրէնքս աստուածայինս ոչ միայն առ մերձաւորս, այլ եւ առ հեռաւորս յամենայն կորուստս հաւատարիմս լինել եւ

անվարձս, զի արտաքոյ իրաւանց է վարձանօք զկորուստ ընկերին դարձուցանել:

ԳԼՈՒԽ ՃԺԵ ՎԱՍՆ ՅԱՐՈՒՅԱՆԵԼՈՅ ՋԱՆԿԵԱԼ ՉՈՐՔՈՏԱՆԻՍ

Գուցէ տեսանիցես զէշ կամ զեզն եղբօր քոյ անկեալ ի ճանապարհի, մի՛ զանց առնիցես զնոքօք, այլ յարուսցես ընդ նմա: Անվարձ եւ զայս եւս հրամայէ: Եւ թէպէտ եւ Օրինադրութիւն է, սակայն եւ թագաւորաց եւ դատաւորաց է գիտելի զայսոսիկ եւ խրատել, որ յաղագս սորին երթան յատեան:

ԳԼՈՒԽ ՃԺԶ ՎԱՍՆ ՀԱՆԴԵՐՁԻ

Մի՛ եղիցի հանդերձ առնացի զկանամբք, կամ զգեցցի այր զգեստ կանացի, զի պեղծ է Տեառն Աստուծոյ քում ամենայն, որ առնէ զայն: Ջի բազում դովաւ լինել չարեաց ի դէպ էր եւ անձեւութիւն իսկ, յաղագս որոյ հրաժարեցոյց: Ըստ այսմ խրատելի է դատաւորաց է քարոզչաց:

ԳԼՈՒԽ ՃԺԷ ՎԱՍՆ ԲՈՒՆՈՑ ԹՌՉՆՈՑ

Եթէ դիպեսցիս բունոց հաւուց առաջի քո ի ճանապարհի, եւ թէ ի ծառ եւ թէ ի գետնի, ձագուց կամ ձուոց, մի՛ առնուցուս զմայրն հանդերձ ձագօք, այլ արձակեսցես զմայրն, եւ զորդիսն առցես քեզ, զի բարի լինիցի քեզ, եւ բազմօրեայ լինիցիս ի վերայ երկրի: Եւ արդ, մի՛ ոք պարսաւանս դիցէ մեզ յայսոսիկ, եթէ զի Օրինադրութիւն է, զի՞արդ լիցի յիրս դատաստանի, նմանապէս եւ՝ նմանք սոցին: Գիտելի է, զի ամենայն օրինադրութիւն լուծեալն եւ զղջացեալն ոչ կարօտի դատաստանի, իսկ անհնազանդիցն դատաստանի պէտք են: Եւ զայս Տէրն յայտ արար, ասելով՝ ի ճանապարհի զղջացեալ տուր զհաշիւ ուխտին, զի մի՛ ի դատաստան անկցիս: Եւ զի այս Օրինադրութիւն է եւ արդարութեան կատարումն: Իսկ լուծեալ եւ զղջացեալ՝ ի ձեռն վարդապետաց վերստին ուղղութիւն, այլ անզղջից՝ դատաստանաց իրաւունք: Փոքրագոյն օրինադրութեամբս տեսցես այժմ զմեծամեծսն սովաւ չափեալս: Եւ զի յայտ արասցէ զհաւս վասն մեր եղեալ, զոր հրամայէ թուղուլ զմայրն աճելոյ պատճառաւ եւ մեզ ի պէտս զձագս եւ զձուս առնուլ: Եւ սոքօք վարձս խոստանայ՝ ցուցանելով, թէ որքան պսակին կատարողքն մեծամեծաց պատուիրանաց, այլ զղջացեալքն ուղղին, եւ անզեղջքն յայսմ՝ դատին: Եւ իրաւացի կարծեմ զոյգ

ամաց թոչնոցն իմանալով ձագուցն խափանման՝ զտուգանս լինել ի թագաւորաց:

ԳԼՈՒԽ ՃԺԸ ՎԱՍՆ ՆՈՐԱՇԷՆ ՏԱՆ

Եթէ շինեսցես տուն նորաշէն, արասցես պսակ շուրջ զտանեօքն, եւ մի՛ սպանումն գործեսցի ի տան քում, զի մի՛ անկանիցի, որ անկանելոցն իցէ, ի նմանէ: Կարծելի է, թէ եւ զայս պատուիրան նման այնմ, որ զվիրաւոր գտեալ՝ պատարագօք հրամայէր քաւել եւ ոչ դատաստանաւ արիւն խնդրել, ոչ տայ ի ձեռս դատաւորաց զպատահեալն: Եւ զի մի՛ այնմ կարօտ իցեն, զգուշանալ ուսուցանէ: Իսկ մեզ ապաշխարութիւն լիցի:

ԳԼՈՒԽ ՃԺԹ ՎԱՍՆ ԾԱՌԱՅԻՑ ՓԱԽՈՒՑԵԼՈՑ

Մի՛ մատնեսցես գծառայ տեառն իւրում, որ յաւելուցու առ քեզ ի տեառնէ իւրմէ: Ընդ քեզ բնակեսցէ եւ ընդ քեզ զետեղեսցի յամենայն տեղոջ, ուր եւ հաճոյ է նմա, եւ մի՛ նեղիցես զնա: Ոչ միայն զայլազգեաց ասէ, այլ եւ զԵբրայեցոց, որ թէ յանդգնեալ ոչ կամի յեւթն ամի թողուլ զնա, եւ յաղագս այնր փախիցէ, զոր ասէ՝ ընդ քեզ բնակեսցէ եւ թէ այլուր հաճոյ իցէ՝ անդ, եւ թէ այլազգ ինչ՝ հաշտեցուցանել եւ ոչ վայրապար տալ ի ձեռս: Զայս եւ մեզ պահել իրաւացի դատաստան է:

ԳԼՈՒԽ ՃԻ ՎԱՍՆ ՄՏԵԼՈՑ Ի ՀՈՒՆՁՍ

Իսկ եթէ մտանիցես ի հունձս ընկերի քոյ, քաղեսցես ձեռօք քովք զհասկն եւ մանգաղ մի՛ արկանիցես յոճ ընկերի քոյ: Զի ողորմութիւն ի կամաց առողին կամի Օրէնքն եւ ոչ ի կամաց կրողացն, եւ եթէ յանդգնի՝ դատաստանաւ է իբր ի յափշտակողէ տոյժ առնուլ:

ԳԼՈՒԽ ՃԻԱ ՎԱՍՆ ՄՏՈՂԱՑ ՅԱՅԳԻ ԸՆԿԵՐԻՆ

Իսկ եթէ մտանիցես յայգի ընկերին քոյ, կերիցես խաղող, մինչեւ յագեսցես, բայց յամանս մի ամանեսցես: Չափս դնէ եւ իրաւունս ակամայ ողորմութեան ճշմարիտ Օրինադրութիւնս այգեգործաց, զի մի՛ տաղտկասցին, զի նոցունց կամօք իցէ ընդ ուտելոյն եւ բառնալն, իսկ ըստ կերողին տոյժ լիցի:

ԳԼՈՒԽ ՃԻԲ ՎԱՍՆ ԱՐՁԱԿԵԼՈՅ ՋԿԱՆԱՅՍ

Եթէ առնուցու ոք կին եւ մտանիցէ առ նա, եւ եղիցէ, թէ ոչ գտանիցէ շնորհս առաջի նորա, զի եգիտ ի նմա իրս անարգութեան, գրեսցէ նմա գիր ապահարզանի եւ տացէ ի ձեռս նորա եւ արձակեսցէ զնա ի տանէ իւրմէ: Եւ գնացեալ լինիցի առն այլում, եւ թէ ատիցէ զնա այրն վերջին, գրեսցէ նմա գիր մեկնելոյ եւ տացէ ի ձեռս նրա եւ արձակեսցէ զնա ի տանէ իւրմէ: Ապա թէ մեռանիցի վերջին այրն, մի՛ կարասցէ այրն առաջին, որ արձակեաց զնա, դառնալ առնուլ զնա ի կնութիւն, զի պիղծ է այն առաջի Աստուծոյ քոյ. եւ մի՛ պղծիցէք զերկիրն, զոր Տէր Աստուած տացէ ձեզ ի ժառանգութիւն: Զայս երբեմն Հրեայքն պատասխանի ետուն Տեառն, ասելով. Մովսէս հրաման ետ գիր գրել մեկնելոյ կանանց, եւ Տէր եցոյց զպատճառն, եթէ յաղագս խստասրտութեան ձերոյ թողացաւ: Եւ զի մի՛ միշտ վայրապար թողցեն, ասաց յՕրէնսն՝ ոչ առնուլ զանարգեալն: Եւ զի ընդարձակ էր առնուլ այլ, եւ միանգամայն երկուս առնուլ եւ կեալ ի մի տուն, եւ այն առանց բանի պոռնկութեան: Եւ զի ըստ մեզ այս ոչ է, եթէ պատահի զկնի թողլոյն եւ մահուն զղջանալ, որ ատելութեամբ մեկնեցան՝ ապաշխարութեամբ միացին, բայց եթէ պատահի այնպիսի լինել, որոց միաւորել չիցէ արժան:

ԳԼՈՒԽ ՃԻԳ ՎԱՍՆ ՈՐ ԱՌՆՈՒ ՆՈՐ ԿԻՆ, ՉԷ ՊԱՐՏ Ի ՊԱՏԵՐԱԶՄ ԵՐԹԱԼ

Եթէ առնուցու ոք կին նորոգ, մի՛ մտցէ ի պատերազմ, եւ մի՛ անկցին ի վերայ նորա ինչ իրք, այլ անպարտ լիցի ի տան իւրում, եւ ուրախ արասցէ զկին իւր: Մարդասէր է Աստուած, կամի, զի մի՛ անկեալ ի պատերազմին՝ սուգ լիցի տարաժամ, յաղագս որոյ անմեղադրելի են միանգամայն, կամ ամբարտաւանեալ՝ յանդգնի ճակատեալ եւ կամ երկբայի՝ զանգիտեալ: Զայս իրաւունս պահելի զօրավարաց առ զօրս իւր ամենայն:

ԳԼՈՒԽ ՃԻԴ ՎԱՍՆ ՈՐՔ ԳՐԱԻԱԿԱՆ ԴՆԵՆ ԿԱՄ ԳՐԱԻ ԱՌՆՈՒՆ ՋԵՐԿԱՆՔ

Մի՛ գրաւեսցես զվերին կամ զներքին երկանք, զի զոգիս գրաւէ այնպիսին: Ոչ հրամայէ բնաւ չգրաւել, այլ նոցունց ցուցանէ զիրաւունս զի միովն թերեւս զղջասցի դարձուցանել զմիւսն, ուստի եւ ծանրացոյց զօրինակն խղճին՝ զոգիս գրաւէ, ասէ, այնպիսին, զի նոցա սպասաւորութեամբ ոգի մնայ ի մարմին: Ջոր եւ յամենայնսն մեզ պահելի է՝ չգրաւել զյոյժ հարկաւորքն, եւ թէ յանդգնի՝ ի դատաւորաց վրէժ լիցի:

ԳԼՈՒԽ ՃԻԵ ՎԱՍՆ ՊԱՐՏՈՒՅ ԵՒ ԳՐԱԿԱՆԵՐՈՅ

Եթէ պարտիցի ընկեր քո զինչ եւ իցէ, մի՛ մտանիցես ի տուն նորա առնուլ ինչ գրաւ, այլ արտաքոյ կացցես, եւ այրն, առ որում պարտքն քո իցեն, հանցէ զգրաւն արտաքս: Եւ եթէ աղքատ իցէ այրն, մի՛ ազգի գրաւն ի տուն քո, այլ դարձուսցես զգրաւ նորա ընդ մտանել արեւուն, եւ ննջեսցէ հանդերձիւն եւ օրհնեսցէ զքեզ, եւ եղիցի քեզ յողորմածութիւն առաջի Տեառն Աստուծոյ քոյ: Չտալ թոյլ մտանել եւ առնուլ գրաւ, զի մի՛ բռնութիւն լիցի, այլ՝ կամաւ. հանեալն, դարձեալ, ոչ ի հարկաւորաց գոյիցն իցէ: Ապա թէ յաղագս աղքատութեան հարկաւորքն իցեն, հրամայէ չօթեցուցանել եւ այսու ողորմած կամի զնոսա լինել ընդ իրաւանցն: Ջսոյն զայս եւ մեզ ընտրելի է:

ԳԼՈՒԽ ՃԻՋ ՎԱՍՆ ՈՐ ՎԱՐՁԷ ԳՐԱՍՏ ԵՒ ԱՅԼ ԻՆՉ ԵՒ ՎՆԱՍԷ

Մի՛ զլացիս զվարձս տնանկին եւ զկարօտելոյն յեղբարց քոց կամ յեկաց քաղաքաց քոց: Այլ նոյն օր հատուսցես զվարձս նորա, եւ մի՛ մտանիցէ արեգակն ի վերայ այնորիկ, զի տնանկ է, եւ այն է յոյս նորա, եւ մի՛ բողոք հարկանիցէ առ Տէր, եւ լինի քեզ այն ի մեղս: Յայտ է, զի յաղագս աղքատութեան եղեւ վարձկան եւ աւուրն պիտոյից: Ջի եթէ ոչ հատուսցես յաւուր գործոյն, դատաստանաւ է աւելի, քան որ վարձեցաւն, հատուցանել զվարձսն: